

25 Մայիս 1928

ENIAN PATRIARCHATE
JERUSALEM

№. 7485-10

Հոգեշնորհ
Տ, Վահան Վարդապետ Գեորգեան
Տեսուչ Հայոց Վանուց
ԼԱԻՌԴԻԿԵ

Ընդունած ենք Ձեր Սիրելութեան Ապրիլ 23, 28 եւ Մայիս 5, 14, թուակիր շամար 154, 156, 163, 166, 172 նամակները, որոնցմով տեղեկութիւններ հաղորդած էիք Եպոսկոպիէի Վանքապատկան Զիթատաններու ծանօթ դատին ներկայ վիճակի մասին:

Տնօրէն ժողովիս վերջին [վերջին] նիստին մէջ ուշադրութեան առնուեցաւ մասնաւորապէս Ձեր վերջին հաղորդագրութիւնը, որուն հետ յղած էիք - ՄԱՀՔԵՄԵՆ ԹէՄԵԻՁ-էն տրուած Վեռագրին օրինակը, եւ Ձեր փոխանորդին փաստաբան Տիար Լեւոն Թամզարեանի կողմէ ձալէպէն Ձեզի ուղղուած 12-5-28 թուակիր նամակը:

Պ, փաստաբանի այդ նամակէն յայտնի կը լլայ, թէ մեր հակառակորդը ի պարահիմ Մուսա Մըստէրիհի պատրաստ է Խատարանին առջեւ խոստովանելու, թէ սեփականութեան որեւէ իրաւունք չունի խնդրոյ առարկայ 9 կտոր արտերուն մէջ, որոնք կէս առ կէս կը պատկանին Երուսաղէմի եւ Սոոյ Աթոռներուն, եթէ այս վերջինները ետ կենան ի պարահիմէն վնասուց հատուցում պահանջելէ, եւ յանձն առնեն այդ արտերուն հասոյթը յատկացնել տեղւոյն Հայոց Կրօն, եւ Կրթական պետքերուն:

Տնօրէն ժողովը կ'ընդունի ի պարահիմի առաջին պայմանը, բայց կը մերժէ արտերուն հասոյթին վերաբերմամբ ըրած անհարկի առաջարկը, ինչ որ մերժուած է Կիլիկիոյ Ս, Կաթողիկոսին կողմանէ ալ:

Այն պարագային որ Տիար Լեւոն Թամզարեան, իբրեւ իրաւաբան նպատաւոր եւ բաւարար կը նկատէ այս դատին վերջնական լուծման համար իր նամակին մէջ յիշուած չորս պայմանները, որոնց հաւանած է նաեւ Ս, Կաթողիկոսը, Տնօրէն ժողովս որեւէ առարկութիւն չունի այդ մասին: Դիտել կուտանք սակայն, թէ այդ արտերը կէս առ կէս սեփականութիւնն ըլլալով Երուսաղէմի եւ Սոոյ Աթոռներուն, ինչպէս ըսինք, օրինական է որ ի պարահիմ Մուսա Մըստէրիհի կողմէ ստորագրուելի գիրը երկու օրինակ պատրաստուի, մէկը Ս, Կաթողիկոսին, եւ միւսը մեր անունով:

Ներքակ վերադարձնելով Ձեր Կիրելութեան Պ, փաստաբանի նամակին զրի-նակը, կը յանձնարարենք ժողովոյս վերագրեալ տեսակետը անմիջապէս հաղորդել Տիար Լեւոն Թամզարեանի, ըստ այնմ կարեւորն ի գործ դնելու համար: Փութացե՞ք նաեւ խնդրոյն արդիւնքը տեղեկագրել մեզ:

Ողջունելի Սիրոյ, Առթարար
ՊԱՏՐԻԱՐԿ ԵՐՈՒՍԱԿԱՆ

Յ, Գ, - Ստացուած են Ձեր Սիրելութեան
164, 165 Համարաւ նամակները: Գալով 158,
եւ 169 համարաւ Ձեր հաղորդագրութեանց,
այդ մասին ժողովոյս որոշումը պիտի հաղորդուի
Ձեզ յառաջիկային: